ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն

Անահիտ Ավանեսյան

2. Զբաղեցրած պաշտոնը

Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Շրի Լանկա, 2018 թ. սեպտեմբերի 17-19

4. Հրավիրող կողմը

EvalPartners, Շրի Լանկայի խորհրդարանականների ասոցիացիա, Շրի Լանկայի գնահատման ասոցիացիա

5. Գործուղման նպատակը

Մասնակցություն «Պատասխանատու խորհրդարան. Ներգրավել գնահատումը 2030 օրակարգի շրջանակում» (EvalColombo 2018) թեմայով Համաշխարհային խորհրդարանականների համաժողովին

6. Քննարկված թեմաները

Միջոցառման նպատակը Կայուն զարգացնան նպատակներին /ԿԶՆ/ ուղղված ծրագրերի գնահատումն էր: Առողջապահության բագավառը նույնպես ԿԶՆ թիրախ է, և այս հանդիպումը նպատակաուղղված էր նաև գնահատելու երկրների արձանագրած առաջընթացը, ինչպես նաև կառավարությունների և որոշում կայացնողների կողմից ԿԶՆ ողղված ծրագրերի հետագա առավել արդյունավետ իրագործմանն ու ընթացակարգերի բարելավմանը:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Միջոցառմանը մասնակցում էին աշխարհի շուրջ 70 երկրների խորհրդարանականներ, կառավարությունների, ՄԱԿ-ի կառույցների, միջազգային,

ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչներ և որոշումներ ընդունող այլ անձինք, ներառյալ՝ տարածաշրջանային խորհրդարանական ֆորումների ներկայիս անդամները, ովքեր հետագայում կկարողանան երաշխավորել գնահատման և մշտադիտարկման մշակույթի պահպանումը:

Միջոցառման շրջանակներում աշխատանքային հանդիպում եմ ունեցել Եվրասիական Տնտեսական Միության անդամ-երկրների ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում կարևորվեց անդամ-պետությունների միջև միասնական տեղեկատվական հարթակի ստեղծման անհրաժեշտությունը, որը թույլ կտա Գլոբալ գնահատման գործընթացը ներդնել ԵԱՏՄ տարածաշրջանի երկրներում:

8.Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի վերջում ստորագրվեց Կոլոմբոյի հռչակագիրն, որում մասնակիցներն արտահայտել են իրենց կամքը և պատրաստակամությունը՝ փոխգործակցության ճանապարհով կազմակերպելու և համակարգելու երկրներում գնահատման ազգային քաղաքականության մշակման աշխատանքները՝ Կայուն զարգացման նպատակներին հասնելու, ինչպես նաև ազգային քաղաքականությունները զարգացնելու նպատակով:

9.Գործուղվող

Անահիտ Ավանեսյան

10. Ստորագրությունը, ամսաթիվը

25 սեպտեմբերի 2018 թ.

25.09.2018

X

VERIFIED OCSP 25.09.2018 18:57:00 GMT+4

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157